Հայկական դիցարան

ԿԱՐԻՆ (ԱԽԱԼՔԱԼԱՔ)

ՀԱՎԵԼՎԱԾ I

1 (83). ԱԼԱԲԱԼԸՂ ԶՈՒԿԸ

Կըլլի չիլլի մե թաքավորմ կըլլի։ Էդ թաքավորը իրեք մանչ կունենա։ Էս թաքավորն օր կրյնի կողինք՝ հեքիմ կը կանչեն օր լավցընեն, էսան էնան կըյնին, դեղ դըրմըն չեն կրնա էնե։

Մե էխտիարըմ կիմանա օր թաքավորը հիվանդ է, կելլե քուքա թաքավորին աեսութան։

Կըսե.—Թաքավորն ապրած կենա, քու լավնալուդ մե դեղմ կա. Բինգյոլու մեչը ձուկ կա, թե էդ ձկեն փերեն ուտեսնեն, դու լավ կըլլիս։

Է՛, մտածեն կը՝ վեվ փերե, վեվ չփերե, թաքավորին մեծ մանչը թող էրթա փերե։ Էս թաքավորին մանչը առավոտ կելլե մե թոռչիմ հետը կառնե կէրթա էդ ձուկը փերելու։ Օխտը օր, օխտը գիշեր չարչըրվելե ետև չի կրնը ձուկ ըռնե, կելլե ետ քուքա։ Ճամփեն կը թաքավորին օրթանշիլ մանչուն. Էսիկ օխտը զօր, օխտը գիշեր չի կրնա ձուկ ըռնե։ Վրա իրեք անքամին ճամփեն կը Շայզադին. Էսիկ կէրթա հասնի կը տեղ, կաչողցնե ձուկը կը ըռնե։

Զուկը լիզու կելլե, կըսե.— Շայզադե, դու ինձի ըաց թող, ես քեզի օրըմ չէ օրըմ պետք քուքամ։

Շայզադան շատ կը մտածե, թե ի՞նչ էնե, վերջը ձուկը ցկեկը գելին մեշ, ու թոռչուն կըսե.—Ահան, քեզի փուքըմ օսկի, մեննըկ չըսես, թե ձուկը բռնեցինք։ Էսիկ օր տուն կհասնի, կըսե.—Զուկը չկրցի բռնեմ։

Թաքավորը թող հիվանդ մնա, հիմի խաբարը տանք մեր թոռչուն։

Թոռչին օսկին օր կառնե, ամմեն օր մտնի ղըյֆըխանան կուտե,

խմե, պըտրտի կը։ Ժողովուրթը էդ թոռշուն խեղճ մարթ գիտեր, կըսեն.—Ա՛յ մարթ, մե քանիմ կափեկ ես վաստրկե, աղոցդ հաքցու, կապցու, ինչի՞ կը բոբլիկ պտտցնես, ինչի՞ կը էդքան խմես, հարփիս։

— Է՛,—թոռչին կըսե,—թաքավորին տղան հորը ի՞նչ էրավ, օր եսա ույս ունենամ իմ տղոցես։ Թոռչին կըսե.—Զուկը բռնեցինք, նորեն գելը ցկինք, թաքավորին տղան չուզեցավ օր հարը լավնար, է՞ իմ տղաս ինձի ի՞նչ տի աշե։

Էս խոսկ ու խորաթան կընկնի թաքավորին անգաճը։ Թաքավորը ճըլլըթ օր ճվաց, ճըլլըթը էկավ կայնավ։

Թաքավորն ըսավ.—Շայզադին գլուխը ղարկեք։

Սինոդին մարթիքը թոփ կըլլին, չեն թողնե օր Շայզադին գլուխը զարնեն։ Էսոնք կըսեն՝ «Թաքավորն ապրած կենա, թաքավորին թուրը իրեն մանչուն վրա քաշել չիլլի, լավ է մեր հողեն աքսորես։ Թաքավորը էդման է կէնե։

Մարը կանուխ կելլե ճամփու պաշար կէնե ու մանչուն էսիրթըմ կէնե, կըսե.—Բալա ջան, հացի օր կը նստիս, քեզի վեվ օր սիֆտըյեն հացի կը կանչե, էնոր հետ ընկերվորցի։ Վեվ օր կաշե օր ղու հրբիդդ բանաս, հացի կանչես, էդոր հետ ընկեր մի ըլլի։

Շահզադեն կէրթա, կէրթա, շատն ու քիչը ասված գիտե, հասնի կը մե ախպըրիմ, լվասվի կը։ Լվասվելու վախտը մե մարթըմ քուքա բարև կուտա, ինքն է կը լվասվի։ Շահզադեն օր հաց ուտել կուզենա, կաշե օր սիֆտը էդ մարթը հացը հանե օր ինքը ուտե ընկերվորնա։ Շատ կսպասե, կաշե օր չիլլի, հրբիդին բերանը կը քակե, հացը կհանե. կըսե.—Արի հաց ուտենք. այ մարթ, դու անոթի չե՞ս։

Հացն օր կուտեն պըրծընին կը, էս մարթը դառնա կը Շայզադին կըսե.—Դուն ա ղիրբըթ կէրթաս, ես է, արի ընկերվորինք, իրար հետ էրթանք։

Շայզադան կըսե.— Չէ՛, ախպար, մենք չենք կրնա ընկերվորի։

Էքսի օրը էլի էդման կպատահի, կենը չի ընկերվորի։ Էղոր էքսի օրը կենը լվասվելու վախտը մե ջայիլ մանչըմ քուքա, բարև կուտա, նստի կը, կսկսե հրբիդին բերանը քակելը։

Տոր Շայզադան կը լվասվի, էսիկ սեղանը կը ցկե, կըսե.—Ախպար, արի հաց ուտենք, անոթի կըլլիս։—Կսկսեն հաց ուտելը. կուտեն վերչասնեն կը օրա՝ ջայիլ մանչը կըսե.— Էրկուսս է ղիրբըթ կէրթանք, արի զրցելով ճամփա էրթանք, ընկերվորնանք։

Շայզադան կըսե.—Լավ։

Շատ կէրթան, քիչ կէրթան, շատն ու քիչը ասված գիտե, հաս-

նին կը մե թաքավորիմ քաղաք։ Էդ վախտը թըլլըլը կը ճվա՝ «Է՛ գե-
ղացի՛ք, քաղքցի՛ք, լավ իմացիք, թաքավորին ախչիկը էղել է տասն-
ութ տարեկան, հըմը հարն ու մարը բերնեն մե խորաթամ չեն իմա-
ցե, վեվ օր թաքավորին ախչըկանը իրեք խոսկ ըսել տվեց՝ թա-
քավորն իրեն ախչիկն է, թաքավորությանը կեսն է էտոր կուտա,
վեվ օր խոսեսնել չկրնա, էնոր ճիտը ճըլլըթ կէնե թաքավորը»։
Թաքավորը էդման պայման է թրե։ Էս ջայիլ տղան թաքավորին
տղին կըսե.—Դիտես ի՛նչ, թաքավորին քաղաքը մեծ է, արի իրեք
տարով այսման պայմանավորվինք. մենք օր այսի քարին քովը
քանք, ինչ օր վաստըկել ենք, ախպոր պես կիսենք։ Դու քնե այդի
մըյլըն, ես է կէրթամ այսի մըյլըն։

Էսոնք խոսկ մեկ կէնեն ու բաժնվին կը իրարմնե։

Խարարը տանք թաքավորի մանչուն։

Էսիկ կէրթա հաց էփողին քովը ծառա կըլլի. տարին մե դաթըմ
հալավ, մեմե իրեն ուտելիքը կը վաստըկե։

Խաբարը տանք ազապ մանչուն։ Էսիկ կէրթա բռնե կը թըլլըլչուն
յախեցեն, կըսե.— Այ մարթ, դու ըռունդ տղա, ազապ տղա, թա-
քավորը գլոխդ կտռե կը, քեզի պես քանի ազապի գլոխ է կտռե, քու
ինչ բանըդ է։

Տղան կըսե.— Քեզ ինչ, թո՛ղ իմ գլոխս կտռե, արի էրթանք։

Էսոնք կելլեն կէրթան թաքավորին քով, կայնին թըմըլլը կէնեն,
պրծնին կը օրա, էս մանչը թաքավորին կըսե թե.— Թաքավորն
ապրած կենա, ես քու ախչկանդ կրնամ զրցեսնե։

Թաքավորը էսոր կըսե.—Դու իմ պայմանս գիտե՞ս։ Ախչկանս
իրեք հեղ զրցեսնես տի իրեք օրվա մեջ։ Օր չըզրցեցուցիր ճիտըդ
ճըլլըթ կէնեմ, թե զրցեցուցիր՝ ախչիկս է, դեվլըթիս կեսն է քեզի
կուտամ։

Պայման կը կապեն օրա, թաքավորին կնիկը կըսե.— Թաքա-
վոր, էս տղան հավատա օր կրնա զրցեսնե։

— Լավ,— թաքավորը կըսե,— էքվան արի զրցեցու։

Էս մանչը կէրթա, էքսի օրը քուքա թաքավորին պալատն օր
նե կը մտնի, տեսնի կը օր ախչիկը թախտին վրան նստել է։ Իրեք
անգամ բարև կուտա ախչկանը, ախչիկը ձեն չի հանե։ Էդ վախտը
թաքավորը կնկանը հետ ֆրդին էտրթին նստած կըլլի։ Էս մանչը
կըսե.— Թաքավորի ախչիկ, ես դատավոր քեզի եմ թրե, մե վճիռըմ
ունիմ՝ աշեմ դու ի՛նչ վճիռ կը հանես։

Կըսե.—Իրեք ընկեր կէրթան ճամփա՝ էտոնցեն մեկը տերտեր
է, մեկը դիրգըր, մեկ է թրգի։ Մութն օր կոխեց անտառը մտան օր

գիշերը լուսանեն։ Վիճակ ցկին, թե սիֆտը վեվ տի ըլլի ղարաոլ։ Սիֆտը վիճակը ընկավ դիրգըրին, էտեվ թըզուն, վերջը ինկավ տերտերին։ Տերտերն ու թըզին օր պառկան, քուն էղան, դիրգըրին քունանա սարավ. մտածեց՝ ինչըղ էնե օր քունը չտանի։ Էսիկ կելլե ծառըմ կը կտռե ու տալըշե կը օրա մարթու լման մե բանըմ կը շինե ու ծառին հետ կայնեսնե կը։ Կաշե օր էպպեշը վախտ անցավ, թըզուն դիրթմե կը, կըսե.—Ե՛լ, քիչմե ես քուն ըլլիմ։ Դիրգըրն օր կըյնի քուն կըլլի, թըզին կայե օր ծառին քովը կայնած բանըմ կա, կըսե՝ «Ախպա՜ր, էս ինչ է, տոր հիմի ընկերս էր, բան չկար հիմի էս ինչ էր օր էկավ կայնավ»։ Էսիկ ինչ կէնե՝ էդ բանը տեղեն չի խաղա։ Էսոր իլլըշն օր կը կըռի, ըռըթ-ըռըթ քովը կէրթա, կայե օր ի՞նչ, մե փետրմ կայնել է մարթու պես· կըսե՝ «Կա չկա՝ էսիկ ընկերոչս էրածն է, շինել է օր քունը չըտանի», կըսե՝ «Օր էդման է՝ ես է մե ղաթըմ հալավ կարեմ հաքցնեմ օր քունս չտանի»։ Ըսածը կէնե. կնիկմարթու հալավ կը կարե ու հաքցնե, էտև տերտերին ձեն կուտա։ Կըսե.— Ե՛լ, համարյա լուսացել է, քիչմե ես քուն ըլլիմ։ Տերտերը շիտկի, նստի կը, պափըռողմ կը քաշե, կաշե օր ծառին հետ սև կնիկմարթմ կայնել է, կըսե՝ «Էս ի՞նչ մընը է սատանա է, ի՛նչ է»։ Աղոթք կէնե, խաչակնքվի կը, ինչ կէնե, էղիկ տեղեն չի հեռենա։ «Ախպար, կըսե, էս ի՛նչ է»։ Ըռըհրթ-ըռըհրթ կէրթա մոտիկ, կաշե օր կնիկմարթ է, հետը զրցի կը, ձեն չի հանե, ձեռք օր կուտա, կաշե օր փետ է։ «Հը՜, կըսե, էսիկ դիրգըրին շինածն է, հալավն է կա չկա՞ թըրզուն կարածն է, իմ է շնորքս թող էնիկ ըլլի, օր ես ա էս մարթուն մարթու լման զրցեսնեմ, հոքեվորցնեմ»։ Տերտերը Նարեկը կառնե, ծնկի կը չոքի, տոր լուս էնքան կը կարթա, կաղոթե, տոր լուսը կը բացվի։ Լուսն օր կը բացվի՝ էդ կնիկմարթը մարթ կը դառնա, հոքեվորնա կը։ Էդ վախտ թըրզին ու դիրգըրը ղարթին կաշեն օր ի՞նչ, տերտերը մե ըռունդ կնիկմարթում հետ նստել է զրցի կը։ Թաքավորիս ախչկանն ըսեմ, էս իրեքը կսկսեն իրար հետ շամաթա էնելը։ Էնիկ կըսե՝ «Էս կնիկմարթը ի՛մս է». մեկալը կըսե՝ «Չէ, ի՛մս է». հիմի օր իրար չը սըպանեն, դու ըսե՝ ո՞ւմ կհասնի էդ ախչիկը։

Թաքավորին աղխիչը կը պատասխանե.— Դիրգըրը թող իրեն հախը առնե, թըզին է իրենը, ախչկանը քանի օր տերտերն է մարթ դառուցե՝ ախչիկը էնոր կըլլի։

Մանչը էղիկ օր կիմանա, պրծնի կը, է՛վալլա կըսե ու դուս կելլե։ Էքսի օրը քուքա կաշե օր թաքավորին ախչիկը կենը թախտին նստել է. բարև կուտա, էսիկ ձեն չի հանե։ Իլլըճըն օր կը կըտրի, էսիկ թաքավորին ախչկանը կըսե թե.— Ես էլի մե վրճիռըմ ունիմ,

իրեք աղապ մանչ կրլլին, էդոնք մե ախչկանըմ կուզեն, հիմի ախ-չիկը չիաե, թե վերին առնե օր իրմենեն չնեղանան։ Ախչիկը կըսե. «Քնացեք մե տարիմ ղիրրրթ էղիք, ձեղնեն վեվ օր քրտնքով փարա բերե՝ ես էնոր կառնեմ»։ Էսոնք կելլեն կէրթան, կէրթան հասնին կը մե թաքավորիմ քաղաք, իրեքն է մե տունըմ կապրին, ամմենն իրեն համար կաշխատի։ Ութը ամիս օր կանսնի, էս տղաքը, իրեքն է շնորքի տեր, մեկը լավ ֆալչի էր, մեկալը լավ հեքիմ, մեկն է լավ ճամփորթ՝ ամսըվանըմ ճամփան սայթըվանմ կէրթար։

Մե իրիկունըմ էսոնք օր նստած կըլլին, ֆալչին օր ֆալի կաշե՝ — է՜,— կըսե տղան,— մենք էս ինչի էկել ենք էստեղ ղիրրրթ ենք էղե, եփոր մեր հ՝ուզած ախչիկը մեռնելու դուռն է։

Հեքիմը կըսե թե. —Ես էման մե դըրմընըմ ունիմ օր, օր մե կաթիլքըմ օր ախչկանը բերանը լըլեն՝ ախչիկը մեկեն օտքի կելլե։

Ճամփա էրթող տղան կըսե.—Տո՜ւր էդ դրրմընը ես հասսըսնեմ։

Էսիկ դըրմընը կառնե ու լուսը չը բասված՝ քուքա ախչկանը դուռը, խըմցընե կը քիմի՝ ախչիկը օտքի կելլե։ Էսօրեն էտև իրեն ընկերտիքն է քուքան էսոր կը հասնին, կսկսեն կռվիլը. ամմենքը կըսեն՝ «Ախչիկը ի՜մս է»։ Հիմի դու թա՜քավորի ախչիկ, դու ըսե, թե ախչիկը ո՞ւմ տանք։

Ախչիկը կըսե.— Օ՜ֆ ինչ կը զրյլըս տանիս, թող ֆալչին իրեն հախը առնե, հեքիմը իրեն հախը, ախչիկը չուստ ճամփա էրթողին կը հասնի, էդ խեղճ մարթը օտքերն է ջարթե։

Մանչը էդիկ օր կիմանա, կելլե դուս, թաքավորին դռանը քով հանդրպի կը օրա, կըսե.— Թա՜քավոր, պայմանը պայման է, ինձի մե հեղմ մնաց օր զրցեսնեմ աղչկանդ։

Տղան դուս կելլե շափթեն ավել, էլ թաքավորին պալատը չի էրթա։ Շափաթ օր օր կըլլի, քուքա պալատը, թաքավորին ծառային կըսե.— Քնացեք թաքավորին ըսեցեք օր ես էկա։

Թաքավորն էսոր կանչե կը իրեն քովը, կըսե.— Քիչըմ նստի՝ տոր ախչիկս քա։

Ախչիկն օր քուքա նստի կը թախտին, էդ վախտը էս տղան նե կը մտնի ախչկանը հարց ու բարև կէնե, ախչիկը պատասխանե կը.— Հերիք է զրյլըս տանիս, լոխմա հեքիմն օր քա իմ ցավիս ղըրմըն չի կրնա էնե։

Տղան ախչկանը անգամ էնելեն էտև կըսե.— Լոխման չի կըրնը, հըմը ես կրնըմ դըրմըն էնե։

Էսիկ կըսե, ու դուս կելլե կէրթա թաքավորին կըսե թե.— Պայմանը պայման է՝ ախչիկդ ինձի տաս տի, թե չէ՝ թաքավորու-

թանդ կեսն է չեմ հ՞ուզե, թող ախչիկդ հազրը ըլի օր էրկու տարի ինը ամիս էտև քամ տանիմ։ Էրկու տարի ինը ամիս էտև ընկերոչս հետը հանդիպիմ տի, պայմանավորել ենք օր քաղքին քընըրը, թիք քարին քովը իրար տի հանդըպինք։

Խարարը տանք Շայզադին։ Շայզադան փռնչուն քովը խմոր կը շաղվեր, ջուր կը փերեր, կապռիր։ Իրեք տարին օր կանսնի՝ էսիկ հեչ չի մտածե օր իրեն ընկերը կսպասե։

Խաբարը տանք ընկերոչը։ Ընկերն ինշխոր թաքավորին ըսել էր՝ էրկու տարի ինը ամիսն օր կը թըմմի, քուքա թաքավորին կըսե.

—Թաքավորն ապրած կենա, ախչիկդ հազրվե՞լ է օր տանիմ։

Թաքավորը կըսե.— Ախչիկս տալը կուտամ, հըմը հ՞ուր կտանիս, տուն տեղ, ամմեն ինչ կա էստեղ՝ ապռեցեք։

Տղան չի համաձայնի։ Թաքավորը ախչկանը խաս ու ղումաշ ջյեզը օխտը դըվի կը բառնա. տղան ախչկանն է կառնե կըյնի դըվընուն առաչը, կըյնի ճամփա։ Շատ կէրթան թե քիչ, ասված դիտե, թիք քարին օր հասնին՝ էսիկ դըվընուն յաթաղ կուտա, ընկերոչը կսպասե։ Իրեք տարի, իրեք օրը կը թըմմի, ընկերը չկա ու չկա։ Էսիկ օր գիշերը կը պառկի, հիշե կը օր ընկերոչը հետ պայման ունի թրած օր ընկերոչը թիք քարին քովը տի հանդըպիր։ Լուսն օր կը բասվի, խըզեինը գործի քուքա, էս տղան կըսե.—Խզեին՛, ես ընկերոչս հետ պայման եմ թրե էրթամ տի, հաշիվս իստկե։

Խըզեինը կըսե.—Փորըմ հաց ես կերե, ղաթմ է հալավ էս մաշե, ահան քեզի հինգ մանեթ։

Շայզադան հինգ մանեթը թընե կը չեբը, մե թուփխանամ հաց կառնե, կըյնի ճամփա։ Քաղքեն դուս հ՞ելլելու վախտը էսիկ հանդըպի կը ընկերոչը, հարստութունն օր կը տեսնի, զարմանա կը։ Հարց բարև էնելե ետև ընկերը Շայդադին կըսե.— Արի մեր իրեք տարվա ուխտ ու պայմանեն զրցինք, թե վերս ինչ ենք էրե։

Շայզադան կըսե.— Ես իրեք տարվա մեչ հինգ մանեթ ու այսի հաքիս զաթըմ չորն եմ վաստկե։

Ընկերը դըվընին ու ախչկանը ցուց կուտա, կըսե.— Ես է այսոնք եմ վաստրկե։

Շայզադան ընկերոչը կըսե.— Ել դըվընները թամքենք էրթանք հայրենիք։

Էսոնք դըվընին կը բառնան, ախչկանը վրան կը նստեսնեն, կըյնին ճամփա. շատ կէրթան թե քիչ, ասված դիտե. հասնին կը Բինգյոլին քընըրը։

Շայզադան կըսե.— Արիք գիշերը հոս մնանք, բարի լսին

իրարմնե բաժնվինք, իմ ճամփաս սաղ կէրթա, քուկդ՝ սոլաղ։ Էսոնք օխտը դվին բեռն ու հինգ մանեթը իրար մեչ կը բաժնեն. իրեք դըվին բեռը մեկին կըլլի, իրեքը մեկալին, էրկու մանեթ ու կեսը մնա կը մեկին, էրկուա ու կեսը մեկալին, մնա կը դըվին վրա նստած ախչիկը, էս տղան, օր փերե ախչկանը մե թևը կապե կը մե ծառին, մեկն է մեկալ ծառին, թաքավորին տղան կըսե.— Ախպար, ի՞նչ կէնես, ախչիկը թող քեզ ըլլի։

— Չէ,— կըսե,— պայմանը պայման է, հալալ կիսեմ տի։

Տղան թուրն օր կքաշե օր ախչկանը կիսե՝ ախչիկը վախենալեն բերանն օր կը բանա, բերանեն մե օցըմ կըյնի։

Էս ընկերը Շայզադին կըսե.— Ձեռվնին քակե։

Դառնա ախչկանը կըսե.— Թաքավորի ախչի, տեսը՞ր քեզի Լոխմա հեքիմը չլավցուց, ես լավցուցի։ Նըյսը։

Էսիկ դառնա Շայզադին կըսե.— Այսի օխտը դըվը բեռը, դըվընին ախչիկը քեզի, ես հեչ բանմա չեմ հ՞ուզե։ Հայրենիք օր հասնիս՝ կըտեսնիս, օր հարըղ մեռել է, մեծ ախպարտ է թաքավոր նստե, քեզի ինչ էրկիր ըսես օր չեն փնտռե, մորդ լաց օրոտումը ախպարդ չի կրնա կտռե, քնե հարազատնուդ խնդրացու։ Ես օր կամ էն ձուկն եմ, օր բռնեցիր էտև բաց թողիր։— Էս խոսկը կըսե ու կըյնի ջուրը։

Թաքավորին տղան դըվընները թաքավորին ախչկանը հետ կը բառնան, մե օրվանըմ ճամփա էր մնացե, կէրթան հասնին կը հայրենիք։ Օխտը զօր, օխտը գիշեր հարսնիք կէնեն։